



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆ ԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԹՆ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԳ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:*

Երևան 2020թ.

**1. Ընդհանուր տեղեկատվություն ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի, «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի և ազդակիր Դաստակերտ բնակավայրի վերաբերյալ**

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Սիսիան համայնքի Դաստակերտ բնակավայրի տարածքում:



**Նկ. 1. Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի տարածք**

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում էր «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ին: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 29.07.2020 թվականի թիվ 1008-Ա հրամանով դադարեցվել է Ընկերության ընդերքօգտագործման իրավունքը, ուժը կորցրած է ճանաչվել լեռնահատկացման ակտը, և լուծվել է օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-174 պայմանագիրը<sup>1</sup>: Ընդերքօգտագործման պայմանագրով<sup>2</sup> հանքի շահագործման ժամկետը սահմանված էր 06.11.2012թ-ից մինչև 9.2 տարի, հանքավայրի զբաղեցրած տարածքը՝ 51,8 հա: Հանքավայրի հաստատված պաշարը, ըստ B+C1+C2 կարգերի, հաշվարկվել է 18 345,6 հազ.տ հանքաքար, 122.9 հազ.տ պղինձ, 8.09 հազ.տ մոլիբդեն, արդյունահանման տարեկան թույլատրելի ծավալը՝ 2000,0 հազ.տ: Շրջակա միջավայրի նախարարության կայքում բացակայում է հանքի շահագործման նախագծի ՇՄԱԳ-ը չնայած նրան, որ, ըստ նույն կայքի, Դաստակերտի լեռնահարստացման կոմբինատի կառուցման նախագծի հասարակական լսումները կայացել են 2012 ապրիլի 18-ին: Առկա է հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման ՇՄԱԳ դրական եզրակացությունը, որով 2017թ. նախատեսվում էր հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման ավարտ: 11.12. 2015թ. կատարվել է հանքավայրի կոորդինատների փոփոխություն, սակայն ընդերքի տրամադրման 9,2 տարի ժամկետը մնացել է անփոփոխ:

<sup>1</sup> <http://www.mtad.am/files/legislation/664.pdf>

<sup>2</sup> [http://minenergy.am/storage/files/pages/pg\\_3018375290222\\_Paymanagir\\_174.pdf](http://minenergy.am/storage/files/pages/pg_3018375290222_Paymanagir_174.pdf)

Ընդերքօգտագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունը հանքը չշահագործելը պայմանավորել է 2013-2018թթ. պղնձի և մոլիբդենի ցածր գնով և հանքի շահագործման տնտեսապես անշահավետությամբ: Ապա հանքը չշահագործելը Ընկերությունը պատճառաբանել է Միսիանի համայնքապետարանի կողմից հողօգտագործման իրավունք չտրամադրելով:<sup>3</sup>

2020թ-ի ապրիլի 14-ի N 37-Ա որոշմամբ Միսիանի ավագանին որոշել է ՀՀ Սյունիքի մարզի Միսիան համայնքի Դաստակերտ բնակավայրի սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից «Մոլիբդենի Աշխարհ» ՄՊԸ-ին շահագործական հետախուզում կատարելու համար 1 տարի 8 ամիս ժամկետով տրամադրել 51.0136հա հողամասերից սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/, մեկ հեկտարը 30000 ՀՀ դրամ տարեկան վճարով:<sup>4</sup> Սակայն Ընկերությունը, ըստ Միսիանի փոխհամայնքապետի ԷկոԼուրին տված հարցազրույցի, համայնքապետարանի հետ պայմանագիր չի կնքել և Միսիանի ավագանին պետք է անվավեր ճանաչի իր իսկ ընդունած որոշումը:

28.07.2020թ. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ «Մոլիբդենի աշխարհ» ՄՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին» 1008-Ա հրամանում, «Մոլիբդենի աշխարհ»-ի ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման համար որպես հիմնավորում, մասնավորապես, նշված է.

Գործի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի համադրված վերլուծության արդյունքում եզրահանգում ենք, որ հողօգտագործման պայմանագիր կնքելուն ուղղված անհրաժեշտ և բավարար գործողություններ Ընկերության կողմից ողջամիտ ժամկետում չեն ձեռնարկվել, և ՀՀ Սյունիքի մարզի Միսիան համայնքի հետ հողօգտագործման պայմանագրի կնքման հետ կապված Ընկերության փաստարկները չեն կարող համարվել Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և Պայմանագրի 8-րդ կետով սահմանված անհաղթահարելի ուժ:

Անդրադառնալով Վարչական վարույթի շրջանակներում պղնձի և մոլիբդենի գների անկման հետ կապված Ընկերության ներկայացրած փաստարկին՝ հարկ է նշել, որ շուկայում օգտակար հանածոների գների տատանումները և դրա արդյունքում ընդերքօգտագործման տնտեսապես անարդյունավետ դառնալու հանգամանքը չեն կարող հանդիսանալ Ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների կատարմանը խոչընդոտող Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և Պայմանագրի 8-րդ կետով սահմանված անհաղթահարելի ուժ:

<sup>3</sup> <http://www.mtad.am/files/legislation/664.pdf>

<sup>4</sup> <http://sisian.am/Pages/DocFlow/Default.aspx?v=&g=c821da30-96d3-411f-982e-cd14a6fdd9ab>

Ընկերության կողմից Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված պահանջների, լիազոր մարմնի հետ կնքված օգտակար հանաձոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրի 3.4-րդ կետի 3.4.1-րդ, 3.4.4-րդ ենթակետերով սահմանված պայմանագրային պարտավորությունները չկատարելը չի եղել անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք:

**Ուստի առկա չեն Ընկերությանը Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Պայմանագրի 8-րդ կետով սահմանված պատասխանատվությունից ազատելու հիմքերը:<sup>5</sup>**

Ըստ Հայաստանի ԱԶԹՆ կայքում<sup>6</sup> տեղադրված Ընկերության հաշվետվությունների՝ 2016-2018թթ. հանքավայրը չի շահագործվել:

«ՄՈՒԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ն, ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի նկատմամբ 06.06.2012թ. թվականից ունենալով ՇԱԹ-29/174 ընդերքշահագործման թույլտվություն, առ այսօր արդյունահանման աշխատանքներ չի իրականացրել:

#### **Ազդակիր համայնքի մասին**

#### **ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Դաստակերտ բնակավայր**

Դաստակերտը որպես քաղաքատիպ ավան ձևավորվել է 1952 թվականին՝ Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման և հանքավայրի հարստացուցիչ ֆաբրիկայի հենքի վրա:



**Նկ. 2. Խորհրդային տարիներին շահագործված Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքի լցակույտեր**

<sup>5</sup> <http://www.mtad.am/files/legislation/664.pdf>

<sup>6</sup> <https://reports.eiti.am/hy/>



### **Նկ. 3. Դաստակերտի հարստացուցիչ ֆաբրիկայի աղացներ**

Դաստակերտը ժամանակին ունեցել է մոտ 3000 բնակիչ, սակայն 1990-ական թվականներին տնտեսական ճգնաժամի պատճառով պղնձամոլիբդենային հանքավայրի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Դաստակերտի մասնաձյուղի փակման հետևանքով, բնակչության հիմնական մասն աստիճանաբար լքել է բնակավայրը: Դաստակերտը հայ-ադրբեջանական կոնֆլիկտի ժամանակ վերաբնակեցվել է Ադրբեջանից տեղահանված հայ փախստականներով:

Ներկայումս բնակավայրի բնակչության թիվը կազմում է 305 մարդ, որոնցից 175-ը՝ կին, 130-ը՝ տղամարդ: 17 ընտանիք ընդգրկված է նպաստառուների ցուցակում, թոշակառու են 30-ը:

Դաստակերտում գործում է մեկ միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, երաժշտական դպրոց, գրադարան, բուժկետ, որը սպասարկում է բուժքույր: Հիվանդանոցային ծառայություններից օգտվելու համար դաստակերտցիները դիմում են «Միսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը: Հողերը (ընդամենը) 4205 հա են, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4138 հա, որից վարելահող՝ 35 հա, խոտհարք՝ 17 հա, արոտ՝ 2233 հա, այլ հողատեսքեր՝ 1853 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 հա: Համայնքն ունի 4.6 հա տնամերձ հողատարածք, որտեղ հիմնականում աճեցնում են բանջարաբուստանային կուլտուրաներ: Բնակչության հիմնական զբաղմունքն է հողագործությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը, արտագնա աշխատանքը:

Դաստակերտը, նախկինում լինելով արդյունաբերական ավան, զրկված է գյուղական գործունեության իրականացման անհրաժեշտ ենթակառուցվածքներից: Չունի բավարար վարելահողեր, իսկ խոտհարքները և արոտավայրերը բավականին հեռու են բնակավայրից, որն ստեղծում է լուրջ խոչընդոտներ դաշտավարության և անասնապահության զարգացման համար:

Համայնքի խնդիրներն են՝ աշխատատեղերի բացակայությունը, մշակովի հողերի սակավությունը, արոտավայրեր հասնելու ճանապարհների անբարեկարգ վիճակը, ոռոգման ցանցի վթարայնությունը, լքված պոչամբարից արտահոսքերը:

### **«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի իրական սեփականատերերի մասին**

«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն գրանցվել է 2005 թ-ի նոյեմբերի 1-ին: «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի հայտարարագրում բացահայտված է երեք իրական սեփականատեր: Նրանցից երկուսը տիրապետում են Ընկերության բաժնեմասի 100 % փաթեթին:

Առաջին իրական սեփականատերն Ընկերության տնօրեն Սամվել Չոբանյանն է, ով նաև «Սագամար» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենն է: Նրա մասնակցության վերաբերյալ այլ տվյալներ չկան:

Երկրորդ իրական սեփականատերը ՌԴ քաղաքացի Դմիտրի Կորժնն է, ով տիրապետում է Ընկերության 29.66% բաժնեմասին, որը ձեռք է բերել 2008թ-ի հունիսի 24-ին: Նշված է, որ Ընկերության կանոնադրական կապիտալում նա ունի մասնակցություն փոխկապակցված ֆիզիկական անձի/անձանց հետ համատեղ:

Երրորդ իրական սեփականատերը ՌԴ քաղաքացի Դմիտրի Տրոիցկինն է: Նրան է պատկանում Ընկերության բաժնեմասերի 70.34 %-ը, որը նա ևս ձեռք է բերել 2008 թ-ի հունիսի 24-ին:

### ***Սեփականատերերի միջանկյալ ընկերությունները***

Կորժնի և Տրոիցկինի համար որպես միջանկյալ ընկերություն գործում է «Գլոբալ Մեթալզ (Արմ) Լիմիթեդ»-ը: Ընկերությունը գրանցված է Կիպրոսում: Այս Ընկերության միջոցով Կորժնի և Տրոիցկինի համար որպես միջանկյալ ընկերություն գործում է նաև Միացյալ Թագավորության Մեն կղզում գրանցված «Էոլլաքոն Լիմիթեդ»-ը:

### **ՇՄԱԳ եզրակացության փորձաքննական պահանջների մասին**

ՇՄԱԳ եզրակացություն՝ բացակայում է ՇՄ նախարարության կայքում: Առկայության դեպքում էլ, միննույն է, այն ուժը կորցրել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն:

**2. «ՍՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորություններն ըստ՝ 07.11.2012թ. ՊՎ-174 ընդերքօգտագործման պայմանագրի**

#### **2.1. Սոցիալական պարտավորություններ**

Ընկերության՝ 07.11.2012թ. ՊՎ-174 ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած սոցիալական պարտավորություններն էին՝

**Դաստակերտ** (Դաստակերտ ավան, Նժդեհ և Տորուրնիք գյուղեր, այժմ Սիսիան համայնքի կազմում) համայնքին՝

1. Յուրաքնչուր տարի հատկացնել 400,0 հազար դրամ՝ համայնքի զարգացման տնտեսական ծրագրերին մասնակցություն
2. Յուրաքնչուր տարի ցուցաբերել 4000,0 հազար դրամ ֆինանսական աջակցություն՝ դպրոցի և մանկապարտեզի համար գրենական պիտույքների ձեռքբերման, շենքերի վերանորոգման համար
3. Յուրաքնչուր տարի Դաստակերտի ջրահավաք և ջրամատակարարման համակարգի բարելավման համար հատկացնել 12000.0 հազար դրամ
4. Ըստ անհրաժեշտության համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար տրամադրել տեխնիկական միջոցներ:

### **2.1.1 Համայնքների նկատմամբ ստանձնած պարտավորությունների փաստացի կատարողականը**

#### **2016թ.**

Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված ֆինանսական պարտավորություններից, ըստ Ընկերության ԱՃԹՆ-ի շրջանակներում ներկայացրած հաշվետվության, չի ցուցաբերել: Համայնքին ցուցաբերել է ոչ ֆինանսական օժանդակություն՝ 464734 դրամ արժողությամբ ամանորյա նվերների տեսքով:

#### **2017թ.**

Ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ֆինանսական պարտավորություններն Ընկերությունը չի կատարել, ըստ նույն հաշվետվության: Համայնքին ցուցաբերել է ոչ-ֆինանսական օժանդակություն՝ 399990 դրամ արժողությամբ ամանորյա նվերների տեսքով:

#### **2018թ.**

ԱՃԹՆ-ի շրջանակներում ներկայացված հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը 60,0 միլիոն դրամ է տրամադրել խոշորացած Սիսիան համայնքին (Սիսիանի արտաբյուջետային հաշիվ) Դաստակերտի ջրահավաք-ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով, 119138 դրամ՝ Դաստակերտի մանկապարտեզի, դպրոցի կարիքների, գրենական պիտույքների և խաղալիքների տրամադրման համար, 53262 դրամ՝ Դաստակերտի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերի համար՝ ըստ Դաստակերտ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության վերաբերյալ 11/18 26 /11/2018թ. պայմանագրի: Դաստակերտի վարչական ղեկավարի համաձայն՝ 2018թ. այդ 60,0 միլիոն դրամից 26,0 մլն. դրամն է մասհանվել Դաստակերտ քաղաքի

համար: Գումարն օգտագործվել է քաղաքի 5 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար:

Այսինքն, համայնքների խոշորացումից հետո, անմիջական ազդեցություն կրող բնակավայրը գրկվել է Ընկերության տրամադրած ֆինանսավորման մի մասից, քանի որ չի կառավարում իր բյուջեն:

## **2.2 Բնապահպանական պարտավորություններ**

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է.

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից
3. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:
4. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասեր (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար, կամ բերել անվտանգ վիճակի:

### **2.2.2 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականի մասին**

Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Ընկերությունը կատարել է միայն հետազոտական աշխատանքներ, և նրա կողմից բացված հորատանցքերը վաղուց փակված են հողով:

## **2.3 Հանքի փակում, հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ և կատարողական**

Համաձայն ընդերքօգտագործման պայմանագրի՝ հանքի փակման ծրագրով նախատեսված է եղել կոնկրետ միջոցառումների իրականացում, և դրա համար ֆինանսական հաշվարկներ արված չեն: Հավելված 2-ում շատ ընդհանրական նշված է, որ հանքի փակումից հետո նախատեսված է աշխատուժի և հարակից համայնքի սոցիալական մեղմացման միջոցառումներ՝ վերաորակավորման դասընթացների, փոքր ու միջին բիզնեսի կազմակերպմանն աջակցելու և նմանատիպ գործողությունների տեսքով, ինչպես նաև հանքավայրի շահագործման ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի փակման միջոցառումների ծրագիրը և այն ներկայացնել լիազոր մարմնին:

Ինչպես ընդերքօգտագործման այլ ծրագրերի դեպքում, այստեղ ևս հնարավոր չէ գնահատել հանքի փակման պարտավորությունների մասով կատարողականի



ցուցանիշները, քանի որ, գործող օրենսդրության համաձայն, հանքի փակման գործընթացները սկսվում են հանքավայրի շահագործման ավարտից ընդամենը երկու տարի առաջ: Մասնավորապես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.1-րդ հոդվածի համաձայն. «Ընդերքօգտագործողները հանքի շահագործման ընթացքում և հանքի փակումից հետո պարտավոր են իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումներ՝ շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ նվազագույնի հասցնելու նպատակով»: Մինևսույն ժամանակ, նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը ներկայացնելիս, ընկերությունն ընդամենը հավաստում է, որ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կկազմի հանքի փակման վերջնական ծրագիր:

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումով ներկայացվող հանքի փակման ծրագիրը պետք է ներառի նաև խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ենթակառուցվածքների ապամոնտաժման, աշխատակիցների սոցիալական ճգնաժամի մեղմացման, մշտադիտարկումների իրականացման, հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների վերաբերյալ դրույթներ: Օրենսդրության վերլուծությունից հետևում է, որ այս դրույթներն ընդհանրական կերպով են ներկայացնում հանքի փակման գործընթացը, մինչդեռ հանքի փակման իրական ծրագիրը ներկայացվում է դրանից ընդամենը 2 տարի առաջ:

**3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալները**

տվյալ	2016 թ.	2017 թ.	2018 թ.
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութի արտադրություն	0	0	0
Շահութահարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0
Եկամտային հարկ, դրամ	Հշվրկ. 4327984 Վճր. 4212000 Հշվնց. 0	Հշվրկ. 4200941 Վճր. 4360930 Հշվնց. 0	Հշվրկ. 9747950 Վճր. 0 Հշվնց. 0

Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Ակցիզային հարկ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
Ռոյալթի, դրամ	Հշվրկ. - Վճր. - Հշվնց. - Վրդրձ. -	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0	Հշվրկ. 0 Վճր. 0 Հշվնց. 0 Վրդրձ. 0
Բնօգտագործման վճար, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	0 0	0 0
Բնապահպանական վճարներ, դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0	Հշվրկ. 0 Հշվրկ. 0
ՇԹ պետտուրք, դրամ	10000000	10000000	10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	1561152	1561152	1561152
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	0	0	0
Գույքահարկ դրամ	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0	Հշվրկ. 0 Վճր. 0
Հողի հարկ (խոշորացված Սիսիան համայնք/Դաստակերտ), դրամ	Հշվրկ. 3615 Վճր. 3615	Հշվրկ. 3615 Վճր. 3615	Հշվրկ. 3619 Վճր. 3619
Վարձակալություն (Հողամաս), դրամ	0	0	0
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն	0	0	0

ն (վոխադրամիջոց)			
Սոց.-տնտ. պարտավորություն (խոշորացված Միսիան համայնք/ Դաստակերտ), դրամ	0	0	60000000 (Միսիանի արտաբյուջետայի և հաշիվ՝ Դաստակերտի ջրահավաք- ջրամատակարար ման համակարգի բարելավում)  119138 (Մանկապարտեզ ի, դպրոցի կարիքների համար գրենական պիտուքների և խաղալիքների տրամադրում)  53262 (Համայնքի զարգացման սոցիալ- տնտեսական ծրագրերին մասնակցություն)
Բարեգործական հատկացումներ	0	0	0
Ոչ ֆինանսական օգն.	464734 (ամանորյա նվերներ)	399990 (ամանորյա նվերներ)	0
Աշխատատեղեր	4 մարդ (անժամկետ)	4 մարդ (անժամկետ)	4 մարդ (1 անժամկետ, 3 ժամկետային)
Անհատույց օտարումներ	0	0	0

**4. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017, ինչպես նաև օգոստոսից հրապարակվող 2018թ-ի համար**

Դրամագլխին վճարված գումարների, ինչպես նաև շրջակա միջավայրի մոնիթորինգի համար վճարված գումարների մասով բոլոր՝ 2016թ., 2017թ. և 2018թ. համար Ընկերության և ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացրած տվյալներում տարբերություն չկա:

Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարների մասով ևս 2016թ., 2017թ. և 2018թ. համար Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հաշվետվությունների միջև տարբերություններ չկան:

#### **5. «ՍՈՒԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ կողմից Դաստակերտ համայնքի բյուջեին կատարած վճարումները 2016, 2017, 2018 թվականներին**

- 2016թ. և 2017թ. Միսիան համայնքին (Դաստակերտ) վճարվել է հողի հարկ՝ ամեն տարի 3615 դրամ, 2018թ-ին՝ 3619 դրամ:
- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:

#### **6. Ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների համար վճարումների, բնապահպանական և բնօգտագործման վճարները 2016, 2017, 2018 թվականների ցուցանիշները՝**

- Շրջակա միջավայրի պահպանության 16916000 դրամ բազային դրամագլխին ամեն տարի համալրել է 1561152 դրամով:
- Մշտադիտարկումների իրականացման բազային վճար սահմանված չէ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, այդ տարիների համար Ընկերությունը հատկացումներ չի կատարել:
- Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

#### **7. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ**

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը 2016, 2017 և 2018 թվականներին բնապահպանական վճար չի վճարել պետական բյուջե:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2016-2019թթ. Միսիան համայնքը/Դաստակերտ բնակավայր որևէ սուբվենցիայի գումար չի ստացել, քանի որ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն մինչ 2020 թ-ը ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում, ինչի հետևանքով գործնականում Ընկերության բնապահպանական

վճարներից Դաստակերտ բնակավայրը չէր կարող օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը<sup>7</sup>, որով այդ ցանկում ընդգրկվեցին նաև մետաղակական հանքավայրեր շահագործող բոլոր կազմակերպությունները: Նույնիսկ ցանկում ներառվելու դեպքում որևէ ծրագիր ներկայացնելն անիմաստ կլիներ, քանի որ այդ տարիներին Ընկերությունը հանքավայրը չի շահագործել, և բնապահպանական վճարներ չի հաշվարկվել և չի վճարվել:

### **7.1 Համայնքային զարգացման ծրագրերում Ընկերության ներգրավվածության մասին**

Մինչ համայնքային խոշորացումը Դաստակերտ համայնքի 2017թ. հրապարակված զարգացման ծրագրում<sup>8</sup> Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործումը դիտարկվել է ոպես համայնքի ուժեղ կողմ, սակայն Ծրագրով նախատեսված կոնկրետ որևէ միջոցառման իրականացման համար հանքավայրը շահագործող կազմակերպության կողմից թվային առումով ներդրումները բացակայում են: Նույնիսկ ներքին ջրային ցանցերի վերանորոգման համար «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ի ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսվող՝ «Յուրաքնչուր տարի Դաստակերտի ջրահավաք և ջրամատակարարման համակարգի բարելավման համար հատկացնել 12000.0 հազար դրամ» կետը չի դիտարկվել որպես համաֆինանսավորման բաղադրիչ:

Համայնքի զարգացման անմիջական նպատակների թվում «Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն»-ը նշվել է որպես առանձին բաժին, սակայն այնտեղ նշվել է միայն հանքավայրի առկայությունը և թվարկվել են տարածքի բուսատեսակները և կենդանատեսակները, մինչդեռ շրջակա միջավայրի պահպանության մասին որևէ խոսք չի եղել: Ծրագրի տրամաբանությունից կարելի է ենթադրել, որ այն կազմվել է բացառապես պահանջվող ձևաչափը պահպանելու համար: Իսկ ընդերքօգտագործման պայմանագրի մասով ենթադրվում է, որ դրա բովանդակության մասին համայնքապետը պարզապես իրազեկված չի եղել:

### **8. Այցելությունների արդյունքում կատարված ուսումնասիրությունների և բնակչության շրջանում անցկացրած հարցումների վերլուծություն**

Բնակավայրի բնակիչների ընդհանուր փոքր թվով պայմանավորված հնարավոր չէր ապահովել հարցազրույցի մեջ մեծաթիվ ընդգրկվածությունը, սակայն ինչպես Միսիանի փոխհամայնքապետի, այնպես էլ բնակավայրի վարչական ներկայացուցչի և բնակիչների հետ անցկացրած հարցումներից պարզվեց հետևյալը՝

<sup>7</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032>

<sup>8</sup> <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer/>

- Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
- Հանքավայրի հարակից տարածքում առկա է խորհրդային տարիներից հանքավայրի շահագործման արդյունքում առաջացած լցակույտեր, որոնք իրենցից շրջակա միջավայրի աղտոտման լուրջ վտանգ են ներկայացնում: Հին հանքավայրի շտուկյաներից հոսող հանքաջրերն անմիջականորեն թափվում են Կըշկոշտի գետ:
- Իսկ նախկին պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարից շարունակվում է թունավոր նյութերով շրջակա միջավայրի աղտոտումը:



**Նկ. 4. Դաստակերտի պոչամբար**

- Դաստակերտի վարչական ներկայացուցիչը և հարցված բնակիչների մեծամասնությունը կողմ են հանքի շահագործմանը՝ դրա մեջ տեսնելով աշխատատեղերի բացման հնարավորություններ և իրենց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ճանապարհը:
- Ընկերությունը համայնքապետարանի հետ հողերի վարձակալության պայմանագիր չի կնքվել, ինչի բացակայությամբ էլ Դաստակերտի վարչական ղեկավարը պայմանավորում է Ընկերության կողմից տեղական հարկերի և տուրքերի չվճարման հանգամանքը:
- Հարցման մասնակիցները նշեցին, որ 2007-2012թթ՝ հանքավայրի հետազոտման փուլում աշխատանքներում ներգրավված է եղել Դաստակերտ բնակավայրի 10 բնակիչ:
- Հարցվածները կարծում են, որ հանքարդյունաբերությունից բացի, համայնքի զարգացման ուղիներից են նաև էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը, կաթի վերամշակման փոքր արտադրամասի հիմնումը, անասնապահության զարգացումը, որին էլ սակայն խոչընդոտում է

համայնքային բյուջեի սղությունը, արտավայրերի հեռավորությունը և այնտեղ տանող ճանապարհների անբարեկարգ վիճակը, պետական աջակցության փոքր ծավալները, համապատասխան մասնագետների և բավարար աշխատուժի պակասը, վարելահողերի սղությունը, ինչպես նաև ոռոգման ջրի պակասը:

- Հարցվածները հիմնականում շրջակա միջավայրի աղտոտվածության և իրենց առողջական վիճակի հնարավոր կապի մասին բավարար չափով իրագեկված չէին: Կարծում են, որ հանքավայրը հեռու է բնակավայրից և իրենց վրա չի կարող բացասական ազդեցություն ունենալ:
- Բնակավայրի բուժապասարկման կետն, ըստ հարցվածների անհրաժեշտ է համալրել նոր՝ առաջին անհրաժեշտության սարքավորումներով և մասնագետներով:
- Հետագայում հանքարդյունահանման պարագայում առաջարկվեց հանքը շահագործող ընկերության և համայնքի միջև ստեղծել բաց հարթակ՝ կազմակերպել քննարկումներ, որը կապահովի հանքի շահագործման գործընթացների թափանցիկությունը, ազդակիր համայնքի նկատմամբ ընկերության հաշվետվողականության բարձրացումը:

### **Դաստակերտի բնակիչների առաջարկները բնակավայրի զարգացման համար**

- Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքի շահագործման դեպքում Դաստակերտ բնակավայրը դարձնել ընդերքօգտագործման պայմանագրի կողմ:
- Դաստակերտին տալ լծակ ընդերքօգտագործողին պարտադրելու կատարել բնակավայրի հանդեպ ստանձնած պարտավորությունները:
- Պարբերաբար ներկայացնել հաշվետվություն Դաստակերտի բնակիչներին ընդերքօգտագործողի գործունեության մասին
- Հանքը շահագործել փակ եղանակով՝ պահպանելով բնապահպանական նորմերը

### **Այլ առաջարկներ**

- Ստեղծել աշխատատեղեր
- Վերանորոգել խմելու ջրագիծը, ոռոգման ցանցը
- Կազմակերպել բնակավայրի աղբահանություն
- Բուժկետն ապահովել անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և որակյալ մասնագետներով
- Ամրացնել և վերանորոգել բնակավայրի բազմահարկ շենքերը
- Համատարած ծառատունկ կազմակերպել

## **9. Եզրակացություն**

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներն առ այսօր չի սկսել, չապահովելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, խախտելով Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի պահանջները:

2. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
3. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
4. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:
5. Ազդակիր համայնքի կարգավիճակը կորցնելով, Դաստակերտ համայնքը բավարար չափով չի օգտվել Ընկերության կողմից սոցիալական աջակցության միջոցներից:
6. Այս Ընկերության, ինչպես նաև մի քանի այլ ընկերությունների համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել, ինչը ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման պահանջների խախտում է:
7. 2012 թվականից առ 2017թթ. չի հաշվարկել և չի վճարել բնապահպանական միջոցառումների իրականացման համար պահանջվող բնապահպանական հարկերը:
8. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումով ներկայացվող՝ հանքի փակման ծրագիրը պետք է ներառի նաև խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ենթակառուցվածքների ապամոնտաժման, աշխատուժի սոցիալական մեղմացման, մշտադիտարկումների իրականացման, հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների վերաբերյալ դրույթներ:
9. Ինչպես ուսումնասիրված որոշ այլ ընդերքօգտագործման պայմանագրերում, այստեղ ևս իրավական շփոթ է առաջանում «թափոնների կառավարման պլան» հասկացության իրավական բնութագրի հարցում: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի իմաստով հանքի փակումից հետո ընկերությունները պարտավոր են իրականացնել թափոնների կառավարման պլանով նախատեսված գործողություններ, սակայն գործող ընդերքօգտագործման պայմանագրերում չկա պարտավորություն՝ ունենալու «թափոնների կառավարման պլան»: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի անցումային



դրույթների (հոդված 80-րդ) համաձայն, ընդերքօգտագործողները պարտավոր են թափոնների կառավարման պլաններ կազմել օրենսգրքի 5.1-ին գլուխն ուժի մեջ մտնելուց 60 ամսվա ընթացքում: Նշված գլուխն ուժի մեջ է մտել 2016թ.

հոկտեմբերին, ինչը նշանակում է, որ թափոնների կառավարման պլաններ կազմելու պարտավորության կատարումը կարող է գնահատվել միայն 2021թ. հոկտեմբերից հետո: Մտացվում է, որ թափոնների կառավարման պլանը հանքի փակման ծրագրի հետ անմիջականորեն փոխկապակցված գործընթաց է, որի իրականացման համար սահմանվում են մանրակրկիտ ֆինանսական երաշխիքներ, սակայն այդ դրույթը ևս կիրառելի չէ այսօրվա ընդերքօգտագործման պայմանագրերի կատարողականը գնահատելու համար: